**Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Արտաշարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերենի (23 դասաժամ), կերպարվեստի (8 դասաժամ), երաժշտության (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-Դիմում( Ձև 1 ), մեկ լուսանկար 3x4 չափի,

-Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

-Անձը հաստատող փաստաթուղթ,

<<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

-Ինքնակենսագրություն (Ձև 5)

-Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր(առկայության դեպքում)

_Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակը վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են 2025 թվականի փետրվարի 24-ից մինչև 2025 թվականի մարտի 7-ը ներառյալ, ամեն օր ՝ ժամը 10:00-ից 15:00-ը,բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի մարտի 11-ին ՝ ժամը 14:00-ին <<Արտաշարի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում,հասցեն՝ 3-րդ փողոց, 3-րդ փակուղի, 4-րդ շենք:

Տեղեկությունների համար զանգահարել ՝ 094189809 հեռախոսահամարով: